Մարզպետ Սարգիս Սահակյանի շնորհավորական ուղերձը Աշխատավորների միջազգային օրվա կապակցությամբ

Սիրելի հայրենակիցնե՛ր,

Շնորհավորում եմ բոլորին՝ Աշխատավորների միջազգային օրվա կապակցությամբ: Տասնամյակներ շարունակ Մայիսի 1-ը նշվող այս տոնը իր բարի ավանդույթներն ունի մեր երկրում: Այն առանձնակի շուքով եւ ակնածանքով է նշվում, քանզի աշխատանքն ու աշխատասիրությունը հայ մարդու հոգու մեջ է, նրա կենսակերպն ու ապրելու գրավականը:

Ահա թե ինչու, Մայիսի 1-ը մենք տոնում ենք սիրով ու ակնածանքով: Այսօր հայ աշխատավորին, ստեղծարար շինականին ու շինարարին, կրթության, գիտության, մշակույթի, տնտեսության բոլոր ոլորտներում ներգրավված մարդկանց մեծարելու, նրանց վաստակը գնահատելու լավագույն առիթ է:

Հարգելի աշխատավորնե՛ր, վերստին շնորհավորում եմ մայսիմեկյան այս գեղեցիկ տոնի կապակցությամբ: Թո՛ղ որ աշխատանքը ոչ միայն ձեր կյանքի կենսական անհրաժեշտությունը լինի, այլեւ վայելեք դրա պատճառած հաճույքը, արարման ու ստեղծագործման բերկրանքը: